ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 04

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Ք. Գավառ 21.12.2012թ.

Նախագահում էր մարզպետ Ռ. Գրիգորյանը, մասնակցում էր մարզի խորհրդի 92 անդամներից 85-ը:

Մասնակցում էին մարզպետի տեղակալներ Ա. Հակոբյանը, Մ. Մանուկյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Խլղաթյանը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետեր, բաժինների վարիչներ, իրավապահ մարմինների ներկայացուցիչներ, մարզային ենթակայության կազմակերպությունների տնօրեններ և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի հաշվետվությունը 2012 թվականի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին:
   /Զեկ. Ռ. Գրիգորյան – մարզպետ/

2. Մարզի համայնքներում վարչական և ֆինանսական հսկողության արդյունքների մասին:
   /Զեկ. Ի. Ասատրյան – մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ/

3. Այլ հարցեր:

Մարզխորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Ռ. Գրիգորյանը:

1.Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին՝

1) ձեռնարկել գործուն միջոցներ համայնքների սոցիալ- տնտեսակն զարգացման ծրագրերի իրականացման ուղղությամբ, բյուջեում հավաքագրված գումարներն ուղղորդել համայնքներում առկա խնդիրների լուծմանը.

2) համայնքների 2013 թվականի բյուջեները ձևավորել իրատեսական՝ հաշվի առնելով հողի հարկի, գույքահարկի և առկա ապառքների ելակետային տվյալները, ինչպես նաև <<Եկամտային հարկի մասին>> ՀՀ օրենքի կիրարկման արդյունքում պահպանել համայնքի ղեկավարի աշխատակազմի, ՀՈԱԿ-ների և համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների աշխատողների աշխատավարձերի նախորդ տարվա չափը.

3) համամասնորեն ապահովել սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշները.

4) գործունեության ընթացքում ապահովել <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Բյուջետային համակարգի մասին >>, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>>, <<Առևտրի և ծառայությունների մասին >>, << Գնումների մասին >> <<Իրավական ակտերի մասին>>, <<Գույքահարկի և հողի հարկի գծով առաջացած ապառքների մասին>> և <<Հաշվապահական հաշվառման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջները:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ